

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԿՆՅԱԶՅԱՆ

Ակտուարական և ֆինանսական
մաթեմատիկա, բակալավրիատ, 3-րդ կուրս

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ ԵՎ ԴՐԱ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՌԻԴԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. ներդրումային միջավայր, օտարերկրյա ուղղակի ներդրումներ, տնտեսական աճ, ներդրողների պաշտպանվածության մակարդակ, ներդրումների ազատություն

Հոդվածում իրականացվել է ՀՀ ներդրումային միջավայրի համակողմանի վերլուծություն: Ուսումնասիրվել են Հայաստանի ներդրումային միջավայրի վրա ազդող առանցքային գործոնները, հետազոտվել են երկրում ներդրումային և գործարար միջավայրի բարելավման հիմնական խոչընդոտները, կատարվել են առաջարկություններ այդ խոչընդոտները վերացնելու ուղղությամբ:

Ընդհանուր առմամբ, սրացված արդյունքները փաստում են, որ, ի հակադրություն ՀՀ ներդրումային և գործարար միջավայրերում իրականացված բազմաթիվ բարեփոխումների, արտաքին ներդրումների գրավչությունը մեր հանրապետությունում զգալիորեն նվազել է, և մոտ ապագայում տարածաշրջանի երկրները, ի հաշիվ ներդրողների պաշտպանվածության մակարդակի բարձրացման, կարող են դեպի ՀՀ ներդրումային հոսքերի էական կրճատման պայման դառնալ:

Ներածություն: Ներդրումային նպատակաուղղված ռազմավարության մշակումն ու արդյունավետ իրականացումը, ներդրումային և գործարար բարենպաստ միջավայրի ձևավորումն ու ապահովումը այսօր կարելի է համարել տնտեսական քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը: Տնտեսության զարգացման համար մեծ նշանակություն ունեն օտարերկրյա ուղղակի ներդրումները, որոնց ներգրավման կարևորագույն նախադրյալը համապատասխան ներդրումային դաշտի ստեղծումն է: Ներդրումային ծրագրերի ներգրավման գործընթացի արդյունավետ կառավարումը ապահովում է տնտեսական կայուն աճ և զարգացում:

Ներդրումային քաղաքականությունը մեր երկրի ընդհանուր տնտեսական քաղաքականության առանցքային ուղղություններից է, որով մեծապես պայմանավորված են միջնաժամկետ և երկարաժամկետ տնտեսական բոլոր ձեռքբերումները: ՀՀ-ն ներդրումների նկատմամբ իրականացնում է «բաց դռների» քաղաքականություն, որն ամրագրված է դեռևս 1994 թ. ընդունված «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքով¹:

ՀՀ տնտեսության զարգացման արդի փուլում ամենակարևոր հիմնախնդիրներից մեկը երկրում ներդրումային գործընթացի աշխուժացումն ու զարգացումն է, որի լուծումը կարևոր նախապայման է տնտեսության կայունության և հետագա տնտեսական աճի ապահովման համար:

Սույն հետազոտության նպատակն է իրականացնել ՀՀ ներդրումային միջավայրի համակողմանի վերլուծություն, ուսումնասիրել Հայաստանի ներ-

¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականության հայեցակարգ», ՀՀ Կառավարության 08.10.2015 թ. նիստի №45 արձանագրային որոշում:

դրումային միջավայրի վրա ազդող առանցքային գործոնները, բացահայտել երկրում ներդրումային և գործարար միջավայրի բարելավման հիմնական խոչընդոտները:

Գրականության ակնարկ: Ներդրումային միջավայրը բավականին դինամիկ է և անընդհատ ենթարկվում է փոփոխությունների: Դրա հետ կապված՝ ներդրումային միջավայրը՝ որպես տնտեսագիտական կատեգորիա, միատեսակ չի մեկնաբանվում տնտեսագետների կողմից:

Ըստ Ս. Ֆակունովի՝ ներդրումային միջավայրը սոցիալական, տնտեսական, իրավական, քաղաքական, մշակութային նախադրյալների հանրագումար է, որը կանխորոշում է այս կամ այն տնտեսական համակարգում (երկրի, տարածաշրջանի, տնտեսության, կազմակերպության) ներդրումների գրավչությունը և նպատակահարմարությունը¹:

Համաձայն մեկ այլ տեսակետի՝ ներդրումային միջավայրը տնտեսական, քաղաքական և ֆինանսական պայմաններն են, որոնք պայմանավորում են ներքին և օտարերկրյա ներդրումների հոսքը տվյալ երկիր: Ընդ որում, բարենպաստ ներդրումային միջավայրը բնութագրվում է քաղաքականությամբ, հստակ օրենսդրությամբ, ցածր հարկադրույքներով և արտոնություններով:

Ըստ Մ. Մելքումյանի²՝ ներդրումային միջավայրը տնտեսական, քաղաքական, իրավական, սոցիալական, կենցաղային, հոգեբանական և այլ այնպիսի գործոնների ամբողջություն է, որը կանխորոշում է ներդրումների ռիսկայնության աստիճանը, դրանց արդյունավետ օգտագործման հնարավորությունը և կենտրոնացնում ներդրողի շահերն այնպիսի գործարար տարածքում և հստակ ժամանակահատվածում, որտեղ ներդրողից պահանջվում է ունակությունների և ջանքերի խստացում:

Այսպիսով, բարենպաստ ներդրումային միջավայրը բնութագրվում է ներդրումային մեծ ներուժով և ցածր ռիսկայնությամբ, ինչը նպաստավոր պայմաններ է ապահովում ներդրումային գործունեության ակտիվության մակարդակի բարձրացման և ներդրումների ներհոսքի համար: Հետևաբար, ցանկացած տնտեսական տարածքի ներդրումային միջավայրի բարենպաստ կամ անբարենպաստ լինելու հանգամանքը պարզելու համար անհրաժեշտ է իրականացնել համալիր հետազոտություն՝ մանրամասն վերլուծելով ներդրումային միջավայրի հիմնական բնութագրիչները, բացահայտելով ներդրումային գրավչությանը խոչընդոտող գործոնները:

Մեթոդաբանություն: Հետազոտության մեթոդաբանական հենքը կազմում են հետազոտության առարկայի, այն է՝ ներդրումային միջավայրի ու դրա բաղադրիչների վերլուծության և գնահատման նպատակով հայրենական և միջազգային պրակտիկայում լայնորեն կիրառվող մեթոդները, սկզբունքներն ու կատեգորիաները:

Հաշվի առնելով հոդվածի նպատակը և ուղղվածությունը՝ մեթոդների շարքում կիրառվել են նկարագրական վիճակագրության, քանակական և

¹ Տե՛ս **Цакунов С.**, Инвестиции в России: ожидание оттепели// Рынок ценных бумаг. 1998. №6. էջ 105:

² Տե՛ս **Մելքումյան Մ.**, Ձեռնարկատիրական գործունեության կազմակերպում, ուսումնական ձեռնարկ, Եր., Ձանգակ-97, 2014:

որակական գնահատման, վիճակագրական տվյալների համակարգային վերլուծության մեթոդները: Բացի դրանից, հետազոտության շրջանակներում թիրախային են համարվել առանձին երկրներում ներդրումային միջավայրը բնութագրող ցուցիչները, ուստի կիրառվել է նաև համեմատական վերլուծության մեթոդը:

Կատարված հաշվարկներում և ուսումնասիրություններում օգտագործվել են ՀՀ օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը, Հայաստանի վիճակագրական կոմիտեի հրապարակումները, Համաշխարհային բանկի համաշխարհային զարգացման ցուցիչները (World Development Indicators), ՄԱԿ-ի Համաշխարհային ներդրումային զեկույցները, հայաստանյան և արտասահմանյան կազմակերպությունների ու փորձագետների՝ ներդրումների ոլորտում կատարված առանձին հետազոտությունները և հրապարակված զեկույցները:

Վերլուծություն: Միջազգային պրակտիկայում ներդրումային միջավայրի գնահատումն իրականացվում է ինչպես զուտ ներդրումային բնութագրիչներից կազմված ընդհանրական ցուցիչների, այնպես էլ համապիտանի բնույթ ունեցող համաթվերի կիրառմամբ: Դրանց թվում են Համաշխարհային բանկի՝ *գործարարությամբ զբաղվելու դյուրինության համաթիվը*, Freedom House կազմակերպության *տնտեսական ազատության համաթիվը* և այլն: Ցուցանիշները, որոնց հիման վրա կառուցվում են նշված համաթվերը, թույլ են տալիս գնահատել ձեռնարկությունների գործունեության կարգավորումը և սեփականության իրավունքի պաշտպանությունը, ինչպես նաև դրանց ազդեցությունը փոքր և միջին ձեռնարկությունների վրա: Գործարարությամբ զբաղվելու ցուցանիշների բարձր վարկանիշը ենթադրում է համապատասխան բարենպաստ միջավայր:

Ըստ *գործարարությամբ զբաղվելու դյուրինության համաթվի*¹ Հայաստանը 190 երկրների շարքում 47-րդ տեղում է՝ 6 կետով վատթարացնելով անցյալ տարվա զբաղեցրած դիրքը (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Հայաստանի դիրքի և միավորների փոփոխությունը՝ ըստ ցուցիչների՝

Ցուցիչներ	2020 թ.		2019 թ.		Միավորի փոփոխությունը
	Դիրք	Միավոր	Դիրք	Միավոր	
Գործարարությամբ զբաղվելու դյուրինություն	47	74.5	41	73.2	1.3
Ընկերությունների հիմնում	10	96.1	8	96.1	0
Շինարարական թույլտվությունների ստացում	62	73.1	98	68.0	5.1
Էլեկտրականության միացում	30	87.7	17	90.8	-3.1
Սեփականության գրանցում	13	88.6	14	88.6	0
Վարկերի ստացում	48	70	44	70.0	0
Փոքր ներդրողների պաշտպանություն	120	42.0	51	40.0	2
Հարկերի վճարում	52	81.5	82	74.0	7.5
Արտաքին առևտուր	43	91.7	46	90.8	0.9
Պայմանագրերի կիրարկում	30	69.7	24	69.7	0
Մնանկության ճանաչում	95	44.6	95	44.0	0.6

¹ Աղբյուրը՝ [Doing Business 2020 \(worldbank.org\)](https://www.doingbusiness.org) և [DB2019-report_web-version.pdf \(doingbusiness.org\)](https://www.doingbusiness.org)

Աղյուսակ 1-ից երևում է, որ, չնայած հետընթացին, Հայաստանի միավորներն ավելացել են 1.3-ով: Դա, սակայն, հանգեցրել է հետընթացի, քանի որ, այլ երկրների համեմատությամբ, միավորների առաջընթացը փոքր է եղել: Վարկանշային աղյուսակում Հայաստանի դիրքի վատթարացման հիմնական պատճառը «Փոքր ներդրողների պաշտպանություն» ցուցիչի գծով աննախադեպ նահանջն է՝ 51-րդ տեղից 120-րդ տեղ:

Հայաստանի գրանցած լավագույն արդյունքներն են՝ «Ընկերությունների հիմնումը»՝ 10-րդ տեղ և «Սեփականության գրանցումը»՝ 13-րդ տեղ: Նշված ցուցիչներով, ինչպես նաև «Վարկերի ստացում» և «Պայմանագրերի կիրարկում» ցուցիչներով բարեփոխումներ չեն արձանագրվել (միավորները չեն փոխվել):

Նախորդ տարվա համեմատ, դիրքային փոփոխություններ արձանագրվել են 9 ցուցիչներով, որոնցից միայն 4-ում ենք ունեցել առաջընթաց՝ «Շինարարական թույլտվությունների ստացում»՝ 36, «Հարկերի վճարում»՝ 30, «Արտաքին առևտուր»՝ 3 և «Սեփականության գրանցում»՝ 1 կետով:

Աղյուսակ 2

Հայաստանի և համեմարվող երկրների ընդհանուր և առանձին ցուցիչներով դիրքը «Գործարարությամբ զբաղվելը - 2020» զեկույցում¹

Երկրներ	ԴԻՐԵԸ	Ընկերությունների հիմնում	Շինարարական թույլտվությունների ստացում	Էլեկտրականության միացում	Սեփականության գրանցում	Վարկերի ստացում	Փոքր ներդրողների պաշտպանություն	Հարկերի վճարում	Արտաքին առևտուր	Պայմանագրերի կիրարկում	Մնանկության ճանաչում
Հայաստան	47	10	62	30	13	48	120	52	43	30	95
Բելառուս	49	30	48	20	14	104	79	99	24	40	74
Ղազախստան	25	22	37	67	24	25	7	64	105	4	42
Ղրղզստան	80	42	90	143	7	15	128	117	89	134	78
Ռուսաստան	28	40	26	7	12	25	72	58	99	21	57
Ադրբեջան	34	9	59	80	44	1	105	40	83	28	47
Վրաստան	7	2	21	42	5	15	7	14	45	12	64
Թուրքիա	33	77	53	41	27	37	21	26	44	24	120
Մոլդովա	48	13	156	84	22	48	45	33	38	62	67
Ուկրաինա	64	61	20	128	61	37	45	65	74	63	146
Էստոնիա	18	14	19	53	6	48	79	12	17	8	54
Լատվիա	19	26	56	61	25	15	45	16	28	15	55
Լիտվա	11	34	10	15	4	48	37	18	19	7	89

Հայաստանում գործարար միջավայրի դյուրինությունը և ներդրումներ ներգրավելու հնարավորությունները հասկանալու համար համեմատենք վերջինիս արդյունքները տարածաշրջանային, ինչպես նաև բնակչության չափով ու տարածքով համադրելի որոշ երկրների հետ: Հայաստանն էապես զիջում է հարևան Վրաստանին (դիրքը՝ 7), Լիտվային (11), Էստոնիային (18), Լատ-

¹ Աղբյուրը՝ Doing Business 2020 (worldbank.org)

վիային (19), ինչպես նաև Ղազախստանին (25), Ռուսաստանին (28), Թուրքիային (33) և Ադրբեջանին (34): Մեր երկրից հետ են միայն Մոլդովան (48), Բելառուսը (49), Ուկրաինան (64) և Ղրղզստանը (80):

Հայաստանը «Փոքր ներդրողների պաշտպանություն» ցուցիչով զիջում է համեմատվող բոլոր երկրներին, բացի Ղրղզստանից, «Սնանկության ճանաչումով»՝ բոլորին, բացի Թուրքիայից և Ուկրաինայից, «Շինարարական թույլտվությունների ստացումով»՝ բոլորին, բացի Ղրղզստանից և Մոլդովայից:

«Հարկերի վճարումով» և «Վարկերի ստացումով» համեմատվող 12 երկրներից Հայաստանը զիջում է 7-ին, «Պայմանագրերի կիրարկումով»՝ 8-ին: Մյուս 4 ցուցանիշներով մեր երկիրն ունի առավել բարենպաստ դիրք:

Այդուհանդերձ, համեմատվող երկրների շարքում որևէ ցուցիչով Հայաստանն առաջատար չէ: Իր լավագույն 2 ցուցիչներից՝ «Ընկերությունների հիմնումով» (10) զիջում է Վրաստանին (2) և Ադրբեջանին (9), իսկ «Սեփականության գրանցումով» (13)՝ Լիտվային (4), Վրաստանին (5), Էստոնիային (6), Ղրղզստանին (7) և Ռուսաստանին (12):

Ամփոփելով կարելի է փաստել, որ Համաշխարհային բանկի տվյալներով՝ Հայաստանը համեմատվող երկրների շարքում գործարարությամբ զբաղվելու ընդհանուր դիրքով զիջում է 8-ին, առաջ է միայն 4-ից: Առանձին ցուցիչների մասով ոչ միայն առաջատար չէ, այլև 10 ցուցիչից 6-ով զիջում է համեմատվող 12 երկրների կեսից ավելիին: Առավելություն ունեցող երկրների շարքում են ինչպես Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամ, այնպես էլ անմիջական հարևան երկրները:

Ի հակադրություն այս պատկերի՝ Հայաստանը նպաստավոր դիրքում է տնտեսական ազատությունների առումով: Տնտեսական ազատության համաթվի 2021 թ. գնահատականով՝ Հայաստանն աշխարհում 32-րդն է: Այս ցուցանիշով մեր երկիրը գերազանցում է մեծ թվով համադրելի երկրների արդյունքը (աղյուսակ 3):


Աղյուսակ 3

Ներդրումների ազատությունը Հայաստանում և համեմատվող երկրներում¹

Երկրներ	Վարկանիշը՝ ըստ Կոնֆենսական ազատության	Ցուցիչի արժեքը, 2021 թ.	Ներդրումների ազատությունը
Հայաստան	32	71.9	75.0
Բելառուս	95	61.0	30.0
Ղազախստան	34	71.1	50.0
Ղրղզստան	78	63.7	60.0
Ռուսաստան	92	61.5	30.0
Ադրբեջան	38	70.1	70.0
Վրաստան	12	77.2	80.0
Թուրքիա	76	64.0	70.0
Մոլդովա	85	62.5	55.0
Ուկրաինա	127	56.2	35.0
Էստոնիա	8	78.2	90.0
Լատվիա	30	72.3	85.0
Լիտվա	15	76.9	70.0

¹ Աղբյուրը՝

Ընդ որում, ներդրումների ազատության ցուցիչով Հայաստանի գնահատականն ավելի բարձր է, ինչը կարևոր է հատկապես այն առումով, որ ներդրումների ազատությունը բարձր և կայուն տնտեսական աճի գրավական է: Այս հանգամանքն ակնառու է գծապատկեր 1-ում, որտեղ ներդրման ազատության գնահատականը համադրվել է դիտարկվող երկրներում վերջին 5 տարիներին արձանագրված տնտեսական աճի միջին մակարդակի հետ: Ինչպես երևում է գծապատկերից, ներդրումների ազատության առավելագույն գնահատականի 30%-ին համապատասխանող մակարդակը կարելի է համարել տնտեսական աճի նախապայման: Հայաստանի գնահատականն այդ մակարդակից շատ ավելի բարձր է, ինչը կարելի է համարել միջնաժամկետում կայուն բարձր տնտեսական աճի կարևոր նախադրյալ:




Գծապատկեր 1. Ներդրման ազատության և տնտեսական աճի համադրումը դիտարկվող երկրներում¹

Հարկ ենք համարում նշել, որ ներդրումների ազատությունը ներդրումների համար անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է: Դրա վառ վկայությունը ՀՀ-ում ներդրումների թույլ կատարողականն է:


2010-2021 թթ. ընթացքում ՀՀ-ում ՕՈՒՆ-ի զուտ ներհոսքը շեշտակի անկում է արձանագրել՝ 2010 թ. 529 մլն ՀՀ դրամից 2020 թ. հասնելով ընդհուպ մինչև 59 մլն ՀՀ դրամի: Դիտարկվող ժամանակահատվածի վերջին տարում վերականգնման թույլ ազդակներ են նկատվել, սակայն դա դեռևս բավարար չէ լիարժեք վերականգնման մասին խոսելու համար: Նկարագրված շարժընթացը գրեթե նույնությամբ կրկնվում է ՀՆԱ-ի նկատմամբ ՕՈՒՆ-ի զուտ ներհոսքի հարաբերակցության պարագայում (գծապատկեր 2):

¹ Աղբյուրը՝ Freedom in the World 2021, Freedom House, Համաշխարհային զարգացման ցուցիչներ (ՀԲ):



Գծապատկեր 2. ՕՈԻՆ-ի զուտ ներհոսքը ՀՀ-ում¹

ՀՀ-ում ՕՈԻՆ-ի զուտ ներհոսք/ՀՆԱ հարաբերակցությունը, դիտարկվող երկրներից մեծ մասի համեմատությամբ, զգալիորեն ցածր է:



Գծապատկեր 3. ՕՈԻՆ-ի զուտ ներհոսքն առանձին երկրներում, ՀՆԱ-ի նկատմամբ տոկոսներով²

2017-2021 թթ. Հայաստանում ՕՈԻՆ-ի զուտ ներհոսքը կազմել է շուրջ 1.1 մլրդ ԱՄՆ դոլար³, որի կեսից ավելին բաժին է ընկնել հանքագործական արդյունաբերության հարակից գործունեության և ֆինանսական միջնորդության ոլորտներին (գծապատկեր 4): Դիտարկվող ցուցանիշով առաջատար 5 գործունեության ոլորտները կլանել են ՕՈԻՆ-ի զուտ ներհոսքի 90%-ը (990 մլն ԱՄՆ դոլար):

¹ Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, Համաշխարհային զարգացման ցուցիչներ:

² Աղբյուրը՝ նույնը:

³ Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ:



Գծապատկեր 4. ՀՀ-ում ՕՈւՆ-ի զուտ ներհոսքը, 2017-2021 թթ., մլն ԱՄՆ դոլար¹

ՕՈւՆ-ի զուտ հոսքերի դիտարկումն ի ցույց է դնում այն իրողությունը, որ օտարերկրյա ներդրումների համար ավելի գրավիչ են հայաստանյան տնտեսության ռեսուրսային մրցունակությունը պայմանավորող ուղղությունները: Իսկ արդյունավետությամբ, կամ առավել ևս, ինովացիոն գործոններով պայմանավորված մրցակցային առավելությունների շոշափելի տեղաշարժ չի արձանագրվել, ինչի վկայությունը բարձր տեխնոլոգիական հենք ունեցող ուղղություններում ՕՈւՆ-ի զուտ հոսքերի համեմատաբար ցածր մակարդակն է:

Եզրակացություն: Ամփոփելով կարող ենք եզրակացնել, որ, ի հակադրություն ՀՀ ներդրումային և գործարար միջավայրերում իրականացված բազմաթիվ բարեփոխումների, արտաքին ներդրումների գրավչությունը մեր հանրապետությունում զգալիորեն նվազել է: Հայաստանի ներդրումային միջավայրի առանձին կարևոր հատվածներում առկա են որակական տեղաշարժի նախադրյալներ, բարենպաստ ներդրումային միջավայրի համար ան-

¹ Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ:

հրաժեշտ պայմաններ և գործոններ, որոնք, սակայն, բավարար չեն ներդրումների կատարողականի որակական բարելավման համար:

«Փոքր ներդրողների պաշտպանություն» ենթահամաթվի աննախադեպ ցածր մակարդակը վկայում է, որ ՀՀ-ում էական անելիքներ կան սեփականության և վերահսկողության ու տեղեկատվության թափանցիկության առումով: Մասնավորապես, նշված ցուցանիշով ՀՀ-ն, դիտարկվող երկրների շարքում, ակնհայտ հետնապահ է, իսկ տեղեկատվության թափանցիկության համաթվով Ղրղզստանի հետ նույն մակարդակն ունի: Հատկանշական է, որ «Փոքր ներդրողների պաշտպանություն» ենթահամաթվով դիտարկվող երկրներից Ղազախստանը և Վրաստանը 190 երկրների մեջ կիսում են 7-րդ տեղը, իսկ Ադրբեջանը 105-րդն է: Սա լուրջ մարտահրավեր է 120-րդ հորիզոնականը զբաղեցնող ՀՀ-ի համար: Խնդիրն այն է, որ այլ հավասար պայմաններում ՀՀ-ն էականորեն զիջում է տարածաշրջանի երկրներին, ինչը ենթադրում է, որ տարածաշրջանի նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերող պոտենցիալ ներդրողները մեծ հավանականությամբ կնախընտրեն ներդրումներ իրականացնել Վրաստանում և Ադրբեջանում: Խնդրի սրությունը պայմանավորվում է նաև այն հանգամանքով, որ ԵԱՏՄ-ի շրջանակներում էլ առավել նախընտրելի է Ղազախստանի կարգավիճակը: Այսպիսով, ՀՀ-ում ներդրողների պաշտպանվածության մակարդակի բարձրացումը օրվա հրամայական է, այլապես մոտ ապագայում Վրաստանը, Ադրբեջանը ու Ղազախստանը կարող են դեպի ՀՀ ներդրումային հոսքերի էական կրճատման պատճառ դառնալ:

Հարկ է ընդգծել, որ ՕՈՒՆ-ի բաշխվածությունը՝ ըստ տնտեսական գործունեության ուղղությունների, արտացոլում է հայաստանյան տնտեսության գլոբալ մրցունակության առավելապես ռեսուրսային բնույթը, իսկ մրցունակության ինովացիոն բաղադրիչը թույլ է զարգացած և ներդրումների համար պակաս գրավիչ է:

Կարող ենք փաստել, որ ներդրումային միջավայրի տեսանկյունից առանցքային նշանակություն ունեցող ենթահամաթվերի կտրվածքով ՀՀ-ում առկա են մի շարք խնդիրներ: Այդ խնդիրների հաղթահարման համար անհրաժեշտ է իրականացնել մի շարք բարեփոխումներ՝ միտված օրենսդրաիրավական, ինստիտուցիոնալ և վարչարարական համակարգերի կատարելագործմանը՝ որպես առաջնահերթություն դիտարկելով ներդրումային միջավայրի հիմնական միջավայրաստեղծ գործոնների բարելավումն ու տնտեսության կայուն զարգացման ապահովումը:

Անհրաժեշտ է հաճախակիացնել գործարար և ներդրումային համաժողովները, որոնք նպաստում են ներդրումների ներգրավմանը և տնտեսական հավասարաչափ զարգացմանը, ինչպես նաև հստակեցնել համաժողովների իրականացումից ակնկալվող արդյունքները և դրանց իրագործման հստակ և գործուն մեխանիզմները, ինչպես նաև հետամուտ լինել համաժողովների արդյունքներին:

Օտարերկրյա՝ ազգությամբ ոչ հայ ներդրողների և ընկերությունների հետ աշխատանքներն ավելի դյուրացնելու համար անհրաժեշտ է ստեղծել միասնական տեղեկատվական հարթակ՝ առնվազն երկլեզու տարբերակով: Հարթակի առկայությունը կարող է էապես նպաստել ներդրումների ներգրավմանը, քանի որ օտարերկրյա ներդրողների համար տեղեկատվության ստացումը կլինի ավելի թափանցիկ և հասանելի:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականության հայեցակարգ», ՀՀ Կառավարության 08.10.2015 թ. նիստի No45 արձանագրային որոշում (23.12.2022):
2. Մելքումյան Մ., Ձեռնարկատիրական գործունեության կազմակերպում, ուսումնական ձեռնարկ, Եր., Զանգակ-97, 2014 թ. (26.12.2022):
3. Цакунов С., Инвестиции в России: ожидание оттепели// Рынок ценных бумаг. 1998. №6. С. 105. (26.12.2022).
4. ՀՀ օրենքը «Օտարերկրյա ներդրումների մասին» (10.01.2023)
5. Համաշխարհային բանկ (15.01.2023)
6. <https://www.armstat.am/am/?nid=48&thid=bal> (15.01.2023)
7. <https://www.cba.am/am/SitePages/Default.aspx> (15.01.2023)
8. Doing Business 2020 (worldbank.org) (21.01.2023)
9. https://www.doingbusiness.org/content/dam/doingBusiness/media/Annual-Reports/English/DB2019-report_web-version.pdf (23.01.2023)
10. Economic Data and Statistics on World Economy and Economic Freedom (indexdotnet.azurewebsites.net) (23.01.2023)
11. Freedom in the world 2021, Freedom House (01.02.2023)
12. Sixth Edition of the IMF's Balance of Payments and International Investment Position Manual (BPM6) (01.02.2023)
13. https://mineconomy.am/media/7487/nerdrumayin_barepoxumneri_qartez.pdf%20,%20%2012 (01.02.2023)

АРМЕНУИ КНЯЗЯН

Актурная и финансовая математика,
бакалавриат, 3-й курс

ИНВЕСТИЦИОННАЯ СРЕДА И ПУТИ ЕЕ УЛУЧШЕНИЯ В РА

Ключевые слова: *инвестиционная среда, прямые иностранные инвестиции, экономический рост, уровень защиты инвесторов, свобода инвестиций*

В этой статье проведен всесторонний анализ инвестиционной среды РА. Были изучены ключевые факторы, влияющие на инвестиционную среду Армении, основные препятствия для улучшения инвестиционной и бизнес-среды в стране, даны определенные рекомендации по устранению этих препятствий.

В целом, полученные результаты свидетельствуют о том, что в отличие от многочисленных реформ, осуществленных в инвестиционной и бизнес-среде РА, привлекательность внешних инвестиций в нашей республике значительно снизилась, и в ближайшем будущем страны региона в связи с повышением уровня защиты инвесторов могут стать причиной существенного сокращения инвестиционных потоков в Армению.

ARMENUHI KNYAZYAN
3rd year Bachelor, Department of Actuarial
and Financial Mathematics

INVESTMENT ENVIRONMENT AND WAYS TO IMPROVE IT IN ARMENIA

Keywords: investment environment, foreign direct investment, economic growth, level of investor protection, freedom of investment

In this article, a comprehensive analysis of the RA investment environment has been carried out. The key factors affecting the investment environment of Armenia, the main obstacles to improving the investment and business environment in the country have been studied, and certain proposals have been made to eliminate these obstacles.

In general, the results indicate that, unlike the numerous reforms implemented in the investment and business environment of Armenia, the attractiveness of foreign investment in our republic has significantly decreased, and in the near future, the countries of the region due to an increase in the level of investor protection may cause a significant reduction in investment flows to Armenia.

ԴԱՅԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Տեղեկատվական համակարգեր,
բազմալրիկայ, 3-րդ կուրս

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԴԵՐԸ
ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հիմնաբառեր. տեղեկատվական տեխնոլոգիաներ, բանկային համակարգ, mobile banking, sms banking, TV banking, չաթբոթ, Valuto

21-րդ դարը նշանավորվում է որպես տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) բուռն զարգացման դարաշրջան: Տեղեկատվական տեխնոլոգիաները ներխուժել են մարդկային գործունեության տարբեր ոլորտներ, ինչպես նաև բանկային համակարգ, որն անմասն չէ ավտոմատացման գործընթացից: Հոդվածի շրջանակում կատարվել է միջազգային փորձի ուսումնասիրություն, վեր են հանվել ՀՀ բանկային համակարգի հիմնախնդիրները և առաջադրվել լուծման ուղիներ, ռազմավարություններ:

Ներածություն: Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը բանկային ծառայություններ մատուցող ընկերություններում հանգեցնում է բիզնես-գործընթացների ավտոմատացման արդյունքում աշխատանքային ծախսերի կրճատմանը, արտադրողականության բարձրացմանը, հաճախորդների սպասարկման բարելավմանը, նոր անհատականացված ծառայությունների մատուցման շնորհիվ հաճախորդների ներգրավմանը, դիսկերի կրճատմանը, առավել արդյունավետ որոշումների ընդունմանը, որոնք վերջնարդյունքում հանգեցնում են ծախսերի կրճատմանն ու եկամուտների ավելացմանը: Սա-